ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԱՆԳԵՂԱԿՈԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Սյունիքի մարզ, գ.Անգեղակոթ, հեռ. 055 09 09 33, էլ-հասցե՝ angeghakot.syuniq@mta.gov.am

N 8 Ա

«23» հունիս 2016թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՆԳԵՂԱԿՈԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ հունիսի «23»- Ի ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին», ՀՀ օրենքի 12-րդ, 14-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ՝4, դեմ՝0, ձեռնպահ՝0, քվեարկության արդյունքներով Անգեղակոթ համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Անգեղակոթ համայնքի ավագանու 2016թ. հունիսի «23»-ի հետևյալ օրակարգը.

1. Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով ՀՀ Սյունիքի մարզի Անգեղակոթ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությունը կատարելու մասին:

ՀՀ Սյունիքի մարզի Անգեղակոթ համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ Ա. Առաքելյան

Կողմ՝ Ա.Եփրեմյան

Կողմ՝ Զ.Գևորգյան

Կողմ՝ Վ.Փանյան

Անգեղակոթ համայնքի ղեկավար՝ Ա.Խաչատրյան

«23» հունիս 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԱՆԳԵՂԱԿՈԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Սյունիքի մարզ, գ. Անգեղակոթ, angeghakotg@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

23 հունիսի 2016թ. № 9 Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՆԳԵՂԱԿՈԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի <<Իրան-Հայաստան 400ԿՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի՝ Հայաստանի Հանրապետության տարածքով անցնող հատվածի ծրագծի մասին>> N1334-Ն, 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N1918-Ն որոշումների և հաշվի առնելով Անգեղակոթ համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 4, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 , համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է**.

1.Հավանություն տալ ՀՀ Սյունիքի մարզի Անգեղակոթ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում առաջարկվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է համայնքի վարչական տարածքում գտնվող հողերից 0,57476 հեկտար, այդ թվում՝

1) իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության հողերից 0.31506 հեկտար /11 միավոր/ վարելահողեր /կադաստրային ծածկագրեր՝ 09-013-0214-0069, 0215-0061, 0217-0051, 0215-0063, 0214-0077, 0227-0005, 0223-0242, 0222-0119, 0217-0049, 0217-0053, 0205-0049/ և բնակավայրերի հողերից 0.095 հեկտար /1 միավոր/ բնակելի կառուցապատման հողամաս /կադաստրային ծածկագիր՝ 09-013-0100-0031/.
2) Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0.1296 հեկտար, որից 3 միավոր արոտավայր՝ 0.1083 հեկտար /կադաստրային ծածկագրեր՝ 09-013-0223-0244, 0223-0245, 0223-0246/, 2 միավոր այլ

Հրազդան ՋԷԿ-Շինուհայր 220 ԿՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի /հենարանների/ շինարարության համար:

2. Համայնքի ղեկավարին՝ կազմել և օրենսդրությամբ սահմանված կարգով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանն ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործը:

Անգեղակոթ համայնքի ավագանու անդամներ

Կողմ՝ Վ. Փանյան

Կողմ՝ Ա. Առաքելյան

Կողմ՝ Հ. Գևորգյան

Կողմ՝ Ա.Եփրեմյան

Համայնքի ղեկավար **Ա. Խաչատրյան**

2016թ. հունիս 23

գ.Անգեղակոթ